ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «12» նոյեմբերի 2019թ.

2019թ-ի նոյեմբերի 7-12, ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Գ. Բուդումյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԱՏԲ-ի պետ
Շ. Տոնապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԱՏԲ-ի պետի տեղակալ
Լ. Օհանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արկադի Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	«Երևանի ՋԷԿ» ՀՇԳՑ Էներգաբլոկի ջրաքիմիական ռեժիմների վարման և հսկողության մեթոդների, երաշխավորագրերի, հրահանգների մշակում	15000000

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ին, ժամը «17:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղ	ք. Երևան, Այգեձորի 67	armenergonaladka@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել են ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան. ,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,

• Մասնակցի կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների և զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակցի առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1*	-	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղ	49700000	59640000

* վարվել են բանակցություններ՝ արդյունքները ներկայացված են ստորև.

Որոշվեց՝

1. Արկադի Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի ներկայացված հայտը գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել գների նավազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:
4. Տիրան Լաճիկյանին՝ հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝ ծանուցել «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի գնային առաջարկը բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո մնաց անփոփոխ:

2. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/156 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Բուդումյան _____

Շ. Տոնապետյան _____

Լ. Օհանյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա. Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____